ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.
Հայկ Հարությունյան
Գայանե Ղարագյոզյան

2. Զբաղեցրած պաշտոնը.
Հավասար հնարավորությունների ապահովման վարչության տարեցների հիմնահարցերի բաժնի պետ
Կառուցվածքային ստորաբաժանումների առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

3. Գործուղման վայրը և ժամկետները.
Ինդոնեզիայի Հանրապետություն, քաղաք Դենպասար (Բալի)

4. Հրավիրող կողմը.
Ասիական զարգացման բանկ

5. Գործուղման նպատակը.
2024թ. սեպտեմբերի 9-10 և 11-13-ին մասնակցություն Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային համաժողովներին, որոնք նպատակաուղղված էին տարածաշրջանում ծերացման խնդիրներին հարմարեցմանը, երկարաժամկետ խնամքի ծրագրերի իրականացման արագացմանը՝ քաղաքականության մշակումից մինչև իրականացում: Ֆորումները և քննարկումները վերաբերում էին տարեցների իրավունքների պաշտպանությանը, վերջիններիս հասարակական կյանքին լիարժեք մասնակցությանը և խտրականության դեմ պայքարի ապահովմանը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակների իրականացմանն ուղղված ազգային ջանքերի շրջանակում:

6. Քննարկված թեմաները.
Տարեցների շուրջօրյա և ցերեկային խնամքի, ինչպես նաև տնային պայմաններում մատուցվող ծառայությունների քննարկում, որոնք ունեն համայնքային բնույթ: Համայնքի վրա հիմնված երկարաժամկետ խնամքի նորարարական համակարգերի մշակում: Համաշխարհային աշխատուժի և միտումների, աշխատուժի արդյունավետ պլանավորման և զարգացման, դերերի, որակավորումների և կրթության, ինչպես նաև առողջապահության և խնամքի միգրանտ աշխատողների խթանման և պաշտպանության այլ թեմաներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Օրենսդրական դաշտի կատարելագործման կարևոր գրավական էր այլ երկրների փորձի ուսումնասիրությունը, որի հետ կապված արժեքավոր էր ֆորումի մասնակցությունը տեղում, քանի որ դրա ժամանակ նախատեսված էին նաև հանդիպումներ ոլորտը համակարգող մասնագետների ու ղեկավարների հետ, այց տարեցների դպրոց: Այցի շրջանակում առաջ էին քաշվել նաև հարցեր, որոնք վերաբերում էին ոչ միայն տարեցների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց (ինչպես հենաշարժական բնույթի, այնպես էլ հոգեկան առողջության խնդիրներով պայմանավորված) խնամքի տրամադրման կարգին, պայմաններին և չափորոշիչներին, այլև ծառայության համար անհրաժեշտ աշխատուժի ներգրավմանը և վերապատրաստումներին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ֆորումի ժամանակ փաստաթղթեր չեն ստորագրվել, որոշումներ չեն ընդունվել, սակայն հանդիպումը կարևոր էր Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում գտնվող զարգացման տարբեր մակարդակների պետություններում խնամքի տրամադրման պայմաններն ու ձևաչափն ուսումնասիրելու տեսանկյունից, քանի որ դրանք ունեին ոչ միայն նմանություններ Հայաստանում կիրառվող եվրոպական մոդելին, այլև տարբերություններ, որոնք պայմանավորված էին համայնքի ու պետության կողմից ծառայությունների ֆինանսավորման չափաքանակների, հասարակական կազմակերպությունների և ձեռնարկատիրական կազմակերպությունների ներգրավման, բարեգործական կազմակերպությունների նվիրատվությունների և տարաբնույթ այլ հարցերի:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Տարածաշրջանային ֆորումի նյութերի ուսումնասիրության ներկայացում տարեցների միջգերատեսչական հանձնաժողովի նիստի ժամանակ սույն թվականի հոկտեմբերին՝ համաձայն ՀՀ վարչապետի 2021 թվականի 535-Ա որոշման, որի ժամանակ կիստակեցվեն անելիքները՝ նոր ստեղծվող ժողովրդագրության ռազմավարության շրջանակում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

18.09.2024